

Տար վեր, դէպի աստղեր
Երազանքները մեր տար վեր,
Տար, որ անմար
Երկնակամարը մեզ տայ սէր,
Նա է առաջ, ում սիրտն է քաջ
Ում հոգում կայ սէր:
Իմ երազանք ինձ տար վեր,
Դէպի աստղեր:
Երազանքները մեր տար վեր,
Տար, որ անմար
Երկնակամարը մեզ տայ սէր,
Նա է առաջ, ում սիրտն է քաջ,
Ում հոգում կայ սէր:

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Տարիներ առաջ, Նազարեթ քաղաքին մէջ կը բնակէր Մարիամ անունով նշանուած բարի աղջիկ մը: Օր մը Գաբրիէլ հրեշտակը յայտնուեցաւ անոր եւ ըսաւ.

«Մի՛ վախնար, Մարիամ: Աստուած քեզի մեծ պարգեւ մը պիտի տայ: Դուն որդի մը պիտի ունենաս: Անոր անունը Յիսուս պիտի ըլլայ: Ան Աստուծոյ որդին է եւ պիտի փրկէ ժողովուրդը»: Մարիամ զարմացաւ, բայց հաւատքով ընդունեց: Յովսէփ՝ անոր նշանածը, նոյնպէս հաւատաց:

Հոռմի կայսրը հրամայեց մարդահամար կատարել: Ամէն մարդ պէտք էր իր ծննդավայրը երթար: Յովսէփ եւ Մարիամ ստիպուեցան ճամբայ ելլել դէպի Բեթղեհէմ: Ճամբան երկար էր, եւ Մարիամ յղի էր: Անոնք երկար քալեցին եւ հասան քաղաք, բոլոր պանդոկները լեցուն էին:

Գիշերուան մութին, անոնք քարայրի մը մէջ ապաստանեցան: Այնտեղ կենդանիներ կային՝ աւանակներ, կովեր, ոչխարներ: Հոն, ծնաւ Յիսուս: Մարիամ մանուկը փաթեց խանձարուրով եւ դրաւ մսուրին մէջ:

Դաշտին մէջ հովիւներ իրենց ոչխարները կը պահէին: Յանկարծ երկինքէն մեծ լոյս մը փայլեցաւ: Հրեշտակ մը յայտնուեցաւ եւ ըսաւ «Մի՛ վախնաք: Մեծ ուրախութիւն կը բերեմ: Այսօր Բեթղեհէմի մէջ Փրկիչ մը ծնաւ»: Հովիւները զարմացան, բայց ուրախութեամբ շտապեցին քաղաք: Երբ գտան մանուկը, ծունկի եկան եւ օրհնեցին զԱստուած: Երկինքէն բազմաթիւ հրեշտակներ երգեցին «Բարձունքներուն մէջ փառք Աստուծոյ, խաղաղութիւն երկրի վրայ եւ հաճութիւն մարդոց մէջ»:

Հեռուն իմաստուն մոգեր կային: Անոնք տեսան երկինքէն փայլող նոր աստղ մը: Աստղը կը նշանակէր մեծ թագաւոր մը: Մոգերը ճամբայ ելան եւ հասան Բեթղեհէմ: Աստղը կանգ առաւ այն քարայրին վրայ: Մոգերը ներս մտան եւ տեսան մանուկ Յիսուսը: Անոնք ծնրադրեցին եւ նուէրներ տուին:

Յիսուսի ծնունդը մեծ ուրախութիւն բերաւ աշխարհին: Այս պատմութիւնը կը յիշեցնէ մեզի, որ Աստուած մարդիկը շատ կը սիրէ:

Յիսուսի Ծնունդի օրը կ'աւետենք մեր ընկերներուն եւ բարեկամներուն ըսելով. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզի մեզի մեծ աւետիս»:



Արմաւենի մը



Թթենի մը

Երբ Յիսուս արթնցաւ ու պատուհանէն փայլուն ծառը տեսաւ, ուրախացաւ, եւ ասիկա Յիսուսին ամէնէն սիրուն նուէրը եղաւ: Այն օրէն ի վեր եղեւինը դարձաւ Կաղանդի ծառ, Ծնունդի ծառ:

ԾՆՆԴԵԱՆ ՀԵՔԻԱԹ

ԻՆՉՊԷՍ ԵՂԵԻՒՆԸ ԴԱՐՁԱԻ ԾՆՈՒՆԴԻ ԾԱՌ

Ասկէ շատ տարիներ առաջ, երբ Յիսուս ծնաւ, աշխարհի ուրախացաւ: Ամէն կողմէն մարդիկ եկան Յիսուս մանուկը տեսնելու եւ իրենց ամէնէն թանկագին առարկաները բերին իբրեւ նուէր:

Յիսուսի ծնած ախոռին մօտիկ կային երեք ծառեր. արմաւենի մը, թթենի մը, եղեւին մը: Արմաւենին իր ամէնէն լայն տերեւը երկարեց, որ հովահարէ Յիսուսը, երբ տաք ընէ: Թթենին իր ամէնէն փափուկ տերեւները թափեց, որպէսզի անով Յիսուսին կակուղ անկողին մը շինէ: Ես ինչ կրնամ տալ մտածեց Եղեւինը, իմ տերեւներս փուշ-փուշ են ու Յիսուսին նուրբ մորթը կը ծակծկեն: Ես բան մը չունիմ Յիսուս մանուկին տալու, եւ եղեւինը սկսաւ լալ:

Մութ էր: Վերը հազար ու մէկ աստղեր կը փայլէին: Աստղերը լսեցին եղեւինին լացը ու որոշեցին օգնել անոր, որ այլեւս չլայ ան: Ու ահա մէկիկ-մէկիկ վար իջան եղեւինին վրայ, ու ծառը սկսաւ փայլիլ:



Եղեւին մը



ԲԱՆԱԿԻ ՕՐ

Հայաստանի մէջ Յունուար 28-ին կը նշուի Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերու կազմաւորման օր (կամ Հայոց բանակի օր): Ան ստեղծուած է 1992-ին, ներկայիս 34 տարեկան է: Այս օրը մեզի կը յիշեցնէ, թէ որքան թանկ է մեր Հայրենիքն ու մեր ազատութիւնը: Բանակի տօնը եւս մէկ առիթ ու հնարաւորութիւն է կրկին յիշելու բոլոր հերոս ազատամարտիկները, որոնք իրենց կեանքի գնով պաշտպանեցին Հայրենիքը եւ կը շարունակեն պաշտպանել:

Փառք ու պատիւ մեր անձնուէր հերոսներու յիշատակին:

Շնորհաւոր տօնդ Հայկական բանակ եւ Հայ զինուոր:



Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ Վարժարանի Գոյութեան նախակրթարանի հայերէնի ուսուցչուհի՝ տիկին Յասմիկ Պապեանի 6-րդ դասարանի աշակերտները կը յայտնեն իրենց մաղթանքները ամանորի առթիւ: Ստորեւ կը ներկայացնենք անոնցմէ մէկ քանին:

«ՄԱՂԹԱՆՔ ԱՄԱՆՈՐԻ»



1. Ամէն տարի, Դեկտեմբեր ամիսը անհամբեր կը սպասեմ՝ դիմաւորելու Ամանորը, շրջապատուած ընտանիքիս եւ ընկերներուս հետ: Երբ Նոր Տարին կը մօտենայ, մենք հրաժեշտ կու տանք իին տարուան եւ խանդավառութեամբ կը պատրաստուինք դիմաւորելու եկող տարին:

Ամէն տարուան նման, այս տարի եւս ունիմ սպասումներ եւ ցանկութիւններ Նոր տարուան կապակցութեամբ: Կը ցանկամ, որ Նոր տարին բերէ բոլորին, յատկապէս ընտանիքիս, առողջութիւն եւ ուրախութիւն: Խաղաղութիւն տայ աշխարհին եւ մասնաւորապէս Հայրենիքիս եւ ժողովուրդիս, որ Հայ ազգը ապրի խաղաղ երկնքի տակ, յաղթահարելով բոլոր դժուարութիւնները:

Մաղթանքս է, որ այս նոր տարին դառնայ բոլորին երազանքներուն եւ նպատակներուն իրականացման տարի:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ:

Մարիանա Վեզիրեան

2. Տարուան վերջին ամիսը հասած է արդէն, շուտով պիտի դիմաւորենք Նոր Տարին: Նախ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել Աստուծոյ այս տարուան համար, սպասելով լաւն ու բարին: Մաղթանքս է, թէ Նոր Տարին բերէ խաղաղութիւն աշխարհին: Պատերազմները դադրին, եւ բոլոր մանուկները ունենան խաղաղ եւ ուրախ մանկութիւն: Նաեւ կը մաղթեմ, թէ աշխարհին մէջ սննայ աղքատութիւն, ցաւ եւ վիշտ: Մարդիկ ըլլան բարի, օգնող եւ սիրով լեցուն: Գալով իմ ընտանիքիս, կը մաղթեմ, թէ 2026-ը առողջութեամբ եւ յաջողութեամբ լեցուն տարի մը ըլլայ մեզի համար: 2026 անհամբեր կը սպասենք քեզ, եղիր բարի եւ խաղաղ տարի մը համայն աշխարհին համար:

Յարութ Բապաքճի

3. Հասած է արդէն Դեկտեմբեր ամիսը, երբ շուտով հրաժեշտ պիտի տանք 2025-ին եւ ժպտուն դէմքերով ու նոր յոյսերով պիտի դիմաւորենք մեր Նոր Տարին՝ 2026-ը: Ես կը մաղթեմ առողջութիւն, խաղաղութիւն եւ յաջողութիւն բոլորին, մանաւանդ Հայ ազգին երջանկութիւն եւ ապահով կեանք, պիտի աղօթեմ, որ Արցախը հայերուն վերադառնայ խաչով կամ սուրով: Նաեւ ընտանիքիս կը ցանկամ փափաքներու իրականացում, թող Աստուած ժպիտը անպակաս պահէ իրենցմէ: Իմ սիրելի դպրոցիս, տնօրէնիս եւ ուսուցիչներուս կը շնորհաւորեմ Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը: Բարի Ամանոր:

Ժիրայր Կիւլեան

4. Նոր տարուան սեմին, իմ մաղթանքներս են որ ընտանիքս, ընկերներս, զարմիկներս եւ բոլոր իմ հարազատներս ըլլան ուրախ եւ առողջ: Ես կ'ուզեմ, որ Նոր Տարին ինծի բերէ ուժ եւ կորով, որ կարենամ շարունակել դասերս լաւապէս պատրաստել, լաւ նիշեր բերելով: Նաեւ կ'ուզեմ ոտնագնդակի մէջ աւելի զօրանալ: Կաղանդ Պապուկէն կը խնդրեմ աղուոր նուէրներ ոտնագնդակի վերաբերեալ եւ շատ կը փափաքեմ ընտանիքիս հետ պտոյտի երթալ Կաղանդի արձակուրդի ժամանակ: Բարեբեր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ կը մաղթեմ բոլոր ուսուցիչներուս եւ ընկերներուս:

Չարենց Հաճիարթիւեան

5. Շուտով Ամանոր է: Բոլորիս կողմէ ամէնէն սիրուած տօներէն մէկը: Ան ուրախութիւն կը բերէ իւրաքանչիւր ընտանիքի: Սպասուած եւ ուրախ տօն է յատկապէս փոքրիկներու համար, քանի որ անհամբեր կը սպասեն Կաղանդ Պապային գալուն: Նոր 2026 թ. կ'ուզեմ ըլլայ առողջութեան եւ յաջողութեան տարի: Խաղաղութիւն թող տիրէ ամբողջ աշխարհին: Կը ցանկամ, որ ընտանիքս միշտ կողքիս ըլլայ, կ'ուզեմ որ բոլոր մայրերը ժպտան եւ ամէնէն, ամէնէն մեծ ցանկութիւնս է, որ աշխարհասփիւռ հայերը վերադառնան Հայաստան:

Նժդեհ Հաղնազարեան

6. Արդէն իսկ նոր տարուան սեմին ենք եւ հրաժեշտ պիտի տանք 2025 թուականին ու դիմաւորենք 2026 նոր տարին: Ես կը մաղթեմ, որ 2026 տարին ըլլայ առողջ եւ յաջող տարի մը իմ ընտանիքիս, ընկերներուս եւ ուսուցիչ-ուսուցչուհիներուս: Կը յուսամ, որ ընկերներս եւ ես կը շարունակենք լաւ սորվիլ մեր դասերը եւ հնազանդ ըլլալ մեր ուսուցիչ-ուսուցչուհիներուն: Ընդհանուրին համար, կը ցանկամ որ նոր տարին ըլլայ խաղաղ տարի մը առանց պատերազմներու եւ կռիւներու, եւ կ'աղօթեմ որ ոչ մէկ պզտիկ աշխարհի վրայ ցաւ զգայ: Բարի Տարի մը բոլորին:

Համօ Սարգիսեան



ՀԵՌԱԽՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Կարօտում եմ եւ քեզ միշտ Հայրենիք իմ հեռաւոր, Իմ մանկական յուշերում Դու պայծառ ես, լուսաւոր:

Կարօտում եմ մեր տան բակը, Պապուս տնկած թուփն ու թուղը, Հրապարակի վարդավառը, Գառնու գաթան, Մեղրու նուռը:

Իմ տունդարձի ժամը կը գայ, Եւ այդ օրը շատ կարեւոր Ձեռքդ բացած ինձ կ'ընդունես, Հայրենիք իմ հեռաւոր:

Նատալի Խուդինեան, 2. կարգ

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylva@horizonweekly.ca
Խմբագրություն՝ Անահիտ Պալեանի
Թիվը պատրաստեց Շանթ Տեօքմեճեան
Ձեռագիրը՝ Լորի Խաչերեանի